

Մ. Իսրայելյան

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Նոր Արև ալանի մոտ՝ Արինքերդում (Ղանլի-թափայում), ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը 1950 թ. սեպտեմբերի 25-ին հայտնաբերել է շինարարական բնույթի երկու սեպագիր արձանագրություն¹։

Արձանագրությունները փորագրված են բաղալի քարերի վրա²։

Առաջինը խոշոր, անկանոն քար է, որի վրայի արձանագրված մասը 0,05 մ դուրս է ցցված և հղկված. հղկված ու փորագրված մակերեսի երկարությունն է 0,69 մ, իսկ լայնությունը՝ 0,38 մ։ Տեքստը բաղկացած է 13 տողից, ամբողջական է ու հիանալի պահպանված. տողերը գծված են. տողերի լայնությունն է 2¹/₂—3 սմ. հորիզոնական մեծ սեպը 4—5 սմ, փոքրը՝ 1—2 սմ, ուղղահայաց մեծ սեպը 2 սմ, փոքրը՝ 1 սմ։ Սեպախմբերի միջև ընկած տարածությունը 1¹/₂—4 սմ է։ Արձանագրության աջ կողմի վերևի անկյունը ունի փոքր ջարդվածք, որը չի խանգարում տեքստի ընթերցմանը։ Տեքստը փորագրված է հղկված ողջ մակերեսին հավասար, բոլոր եզրերից հաշված՝ ծայրից-ծայր (տես նկ. 2, էջ 78)։

Բերում ենք ամբողջական տեքստը գիտական տառադարձումով.

1. ^DHal-di-ni-ni al-su-i-si-ni
2. ¹Ar-gi-iš-ti-se ¹Me-nu-a-hi-ni se
3. i-ni È. GAL ba du-si si-di-is tu-ni
4. te-ru-bi ^{URU}Ir-bu-u ni-ni ti-ni
5. ^{KUR}Bi-a-i-na-u-e us ma-a-se
6. KUR lu-lu-i-na-u na-pa-hi-a-i-di
7. ¹Ar-gi-iš ti se a-li ki-u ra-ni
8. ku-ul-di-ni ma-nu za-du-u-li
9. ar-ni ši-ni-li DAN. NU iš-ti-ni
10. ^DHal-di-ni-ni al-su-i ši-ni
11. ¹Ar-gi-is ti-ni ¹Me-nu-a-hi
12. LUGAL DAN.NU LUGAL ^{KUR}Bi-a-i-na-ù-e
13. a-lu-si ^{URU}Tu-uš pa-a-e URU

Տեքստը սկսվում է ուրարտական արձանագրություններին բնորոշ նախաբանով՝ ^DHalidinini alsuišini..., որ մենք ճիշտ ենք համարում թարգմանել «Սալգյան (խալդ աստծու) մեծությունը...» վերջին -(i)ni ablativus արտահայտող մասնիկը ակադ. Ի. Ի. Մեշանինովը ըմբռնում է որպես եղակի արականի հոլովածև և վերոհիշյալ կապակցությունը թարգմանում

¹ Ուղիեռական Հայաստան, 1950 թ. № 234; Коммунист, 1950, № 235:

² Քարերը այժմ դրնվում են Երևանի Պետական Պատմական թանգարանում:

է «Նալդուն՝ մեծին...» իմաստով¹ Ի. Ի. Մեշչանինովին է հետևում պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, երբ զրոււմ է՝ «...Բայց բոլորովին անվիճելի է - ու սուֆիքսի ըմբռնումը որպէս տրական հոլովի նիշ՝ ոչ հոգնակի թվի համար»²

Մակայն նման ըմբռնումը հնարավորութիւն չի տալիս ^DHaldinini bausini անսլոգիկ կոնտեքստը հասկանալու։ Հենց ինքը. Բ. Բ. Մեշչանինովը այս առթիւ զրոււմ է՝ «...bausini, որ մեկնարանվում է որպէս բառ, բաց, պարզ է յուր ձևավորմամբ և յուր իմաստային նշանակութեամբ»³ Մինչդեռ ablativus-ով էստացվի՝ «Նալդյան խոսքով ॥ հրամանով» (Արգիշտին անցկացրեց ջրանցք)⁴, որ միանգամայն պարզ է ու հասկանալի։ Հնագույն աշխարհաճանաչողութեամբ մարդը իր բոլոր մեծ ու փոքր դործերը, ինչպէս և իր գոյութիւնը վերագրում էր աստվածների կամքին։ Ասորեստանի Թիգլաթ-Պալասար 1-ինը գրում է՝ «Աստուր աստծու խոսքով... նրանց նվերը ևս ընդունեցի, հարկ և տուրք (նվիրատվութիւն) սահմանեցի նրանց վրա»⁵։ Հայերեն վիճակի արձանագրութիւններում կարգում ենք՝ «Կամաւն բարերարին ա(ստուծո) և ողորմութ(եամ)ը ս(ուր)ը հոգսն ևս (այս ինչ գործերը կատարեցի)»⁶։

«Շնորհին ա(ստուծո), ևս... ետու արդիւնս ի ս(ուր)ը եկ(ե)ղ(եց)ի(ս)»⁷

Նման ոճի հաճախ հանդիպում ենք և պատմիչների մոտ. «...և մեր մեղէն ողջ եմք դիցն օգնականությամբ», կամ «...աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ գտերութիւնն Բուշանաց»⁸ և այլն և այլն։

Bausini բառը կասկած չի թողնում, որ ճիշտ են այն դիտականները (Հ. Յրիգրիս, Դր. Ղափանցյան, Կ. Ծերեթելի և ուրիշներ), որոնք այս (i) ու վերջածանցը ընդունում են որպէս ablativus-ի մասնիկ. այդ հիմնավորվում է նաև կոնտեքստով. ^DHaldinini alsuisini (usmasini, usgini և այլն) ղժվար է տրականով ըմբռնել, երբ նրան հաջորդում է չկոք սեռի բայ՝ ^DHaldinini alsuisini ustadi=«Նալդյան մեծութեամբ արշավեցի»⁹, կամ երբ նրան հաջորդում է տիտղոսաշարը, ինչպէս հանդիպում է մեր այս արձանագրութեան վերջում (տողեր 10—13)։ Այս դեպքում, մանավանդ, պարզ է, թե «Նալդյան մեծութեամբ» է, որ «Արգիշտին Մենուէյան թագավոր (է) հոգր, թագավոր (է) Բիայնա երկրների, տերը՝ Տուշպա քաղաքի»։

Այսպիսով, տեքստի առաջին երեք տողը թարգմանում ենք՝ «Նալդյան մեծութեամբ Արգիշտին Մենուէյան այս բերդը հոյակապ⁹ կառու-

¹ И. И. Мещанинов, Язык ванской клинописи, т. II, 1935, էջ 147, 150 և այլուր։

² Б. Б. Пиотровский, История и культура Урарту, 1944, էջ 327—328։ Իսկ 1949 թ. իր մի հոդվածում ^DHaldinini alsuini (alsuisini-ի փոխարեն) թարգմանել է «Նալդ աստված մեծ»—Эпиграфика Востока, 1949, III, էջ 88։

³ И. И. Мещанинов, Яз. ванской клиноп., т. II, 1935, էջ 152։

⁴ Պարագայի արձանագրութիւն, 6—7 տողեր։

⁵ Օգտվում ենք պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու գրքից։ Ист. и культ. Урарту, Ереван, 1944, էջ 40։

⁶ Տեղեկադիր Պատմ. և գրակ. ինստ., 1938, 1-ին դիրք, Երևանի կաթողիկե եկեղեցու № 4, № 8 արձանագրութիւններից (ընթերցում Կ. Ղափադադյանի)։

⁷ Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 15, 16։

⁸ Եվ ոչ թե «Նալդուն՝ Մեծին արշավեցի»։ Իսկ «Նալդուն՝ տիրոջ» տրական ձևի համար հայտնի է, որ ուրարտերենը ունի -e վերջավորութիւնը. «^DHaldi-e euri-e» (այս և այս նվիրարեցի)։

⁹ Гр. Капанцян, Халдская надпись Русы I из Келанкрава, Ереван, 1931, էջ 5, (Эрочимъ, հետագա աշխատութիւններում՝ հոյակապ)։

յեց¹ (=ini Ê. GAL badusi sidiistuni), ըստ որում sidiistu-ni (=կառուցեց) բայը կիրառված է աորիստի եզակի 3-րդ դեմքով, ինչպես պահանջում է 'Argišti šē 'Menuahini se հսկողաձևը, սակայն շարունակությունը (4-րդ տող) հաղորդվում է՝ 1-ին դեմքով՝ teru-bi (URU Irbuunini tini) սպասված teru-ni 3-րդ դեմքի փոխարեն: Սովորաբար 3-րդ դեմքից 1-ին դեմքին անցնելու համար ուրարտական տեքստերը կիրառում են՝ «a-li-(e)» «ասում է» բայը: ('Argištišē 'Menuahinise) alie=(Արգիշտին Մենուեայան) ասում է՝ «այս բերդը հոյակապ կառուցեցի (šidiuštu-bi) կամ՝ «այս ջրանցքը անցկացրի (agu-bi)» և այլն:

Մեր այս դեպքից, հիմն այն փորագրողի թյուրիմացությունն արդյունքը չէ, պետք է ենթադրել, որ հիշյալ անցումը պատմողական 3-րդ դեմքից 1-ին երբեմն կատարվել է ուղղակի ձևով, առանց alie բայի օժանդակություն:

Teru-bi ներգործական սեռի բայը խիստ զործածական է և հանդես է գալիս տարբեր կոնտեքստներում՝ միշտ միևնույն շղենել, հաստատել՝ հիմնական իմաստով:

Հետաքրքիր ոճ է terubi URU Irbuunini tini KUR Biainaue usmaase KUR luluinau napahiaidi արտահայտությունը, որ կազմում է մեր, տեքստի 4—6 տողերը: Այդ փքուն դարձվածքը, թերևս ուրարտ նվաճողները կիրառել են եովով նվաճած երկրների նկատմամբ, ինչպես օրինակ կարգում ենք Նոր-Բայազեդի 5—7 տողերում, զրեթե բառացի նույն կառուցվածքով՝ terubi tiini ^DHaldiei URU KUR Biainaue usnaase KUR. KUR napahiaidi. կամ՝ Սարգուր 2-րդի տարեգրերի 4-րդ սունյակի 16—17 տողերում. E.GAL^D istiini sidiistubi KUR Biainaue usmaase KUR luluinaui naapahiaidi, որից առաջ տեքստը հաղորդում է՝ Սարգուրի արշավանքը դեպի Pulua³ երկիրը, Liipliuni թագավորական քաղաքի նվաճումը, այդտեղ արձանագրություն կանգնեցնելը, զերեվարությունը և վերջապես նվաճված երկրում բերդերի կառուցումը: Մատավորապես նույն կապակցության ենք հանդիպում Ծովինարի (Դյուլանդոան) արձանագրության 18-րդ տողում՝ ...ini Ê. [GAL badusie] sidiistubi [terubi tini] ^DIM-i URU KUR [Biainaue usmaase],⁴

¹ Sidištu- բայաձևը կապված badusi(e) բառի հին թարգմանության հետ («վատ, խաբսված») հասկացվել է վերանորոգել (restore) իմաստով:

² 1929 թ. A. Cölze-ն Կելիշիյի երկրիզվյան արձանագրության հիման վրա թարգմանում է այն «aufrichten=բարձրացնել, կառուցել» իմաստով (Zur Kelschlu-Stele...; ZA, NFV (XXXIX) Band, 1/3 Heft, էջ 104):

³ Դեռևս A. Sayce—ը թարգմանել է այն establisch կամ set բառերով (չնիլ, նստեցնել... տնկել, սերմանել, ցանել, տարածել—Անգլ.—հայեր. բնորարան, Կ. Մալխասյան), Ի. Ի. Մեշչանինովը թարգմանում է այն «я закончил» իմաստով, իսկ Թալիշի արձանագրության առթիվ գրում է՝ «закончил» в данном случае «разбивкою», «разбил» (Изв. АН СССР, 1932, № 4. էջ 346), Այս թարգմանությունը, մեր կարծիքով, բռնազրոսիկ է, բառը ոչ մի կապ չունի գնալ (—г—?) արմատի հետ, ինչպես կարծում է Ի. Ի. Մեշչանինովը, իսկ դնել, հաստատել, մտնեցնել, իմաստները մի շարք լեզուներում հեշտությամբ արտահայտում են նաև «տնկել», «ցանել» հասկացությունը (հմմ.՝ հայերենում, ռուսերենում, անգլիերենում և այլն):

⁴ Դժբախտաբար տեղը անհայտ է, բայց անշուշտ ծայրամասային երկիր է, որը Սարգուրը միացնում է իր երկրին:

⁵ Гр. Канакьян, Халдская надпись Русы I из Келанкрана, 1931. էջ 5:

Այդ կապակցության մեջ *usmase* բառը ունի երկու հավանական թարգմանություն՝ «ուժ, հզորություն» որ ընդունում է զիտականների մեծ մասը,¹ իսկ ՀԳԱ իսկական անդամ Գր. Ղափանցյանը թարգմանում է այն «փառք» բառով²: Այս վերջին թարգմանությունը մեղ թվում է ամենահավանականը և կոնտեքստին ամենահարմարը:

Լսւս- սովորաբար թարգմանվում է բարբարոս իմաստով³, սակայն մեր կարծիքով ճիշտ է Գ. Մելիքիշվիլին, որ այն ըմբռնում է որպես «թշնամի»⁴ Նոր-Ռայազեղի արձանագրության մեջ սովորական KUR *lululnau(e)* բառը փոխարինված է գաղափարադրային KUR. KUR (=երկիր քնամի) ձևով:

Հիշյալ կոնտեքստի վերջին *napahiaidi* բառը առայժմ այլ կապակցությամբ հայտնի չէ և բառիմաստն էլ պարզ չէ: Ըստ երևույթին իմաստից ելնելով՝ Գ. Մելիքիշվիլին ողջ կապակցությունը թարգմանում է այսպես՝ «Բիայնա երկրի հզորացման (և) թշնամի երկրի սառացման (ճանաչվողը?) համար»⁵, որը միանգամայն հնարավոր է, եթե *usmase*-ն թարգմանվի ույժ իմաստով: Գր. Ղափանցյանը նույնպես իմաստից ելնելով *napahiaidi* բառը թարգմանում է սարսափ իմաստով, ի հակադրություն փառք բառի, որպես հին լեզուների բնորոշ ոճ: Մենք համամիտ ենք այս թարգմանությանը՝ հիմք ունենալով նաև կոնտեքստի քերականական կառուցվածքը՝ *usmase* բառը կիրառված է իր ուղիղ ձևով, իսկ *napahiaidi*-ն ըստ երևույթին -di ուղեւորական հոլովի վերջածանցով: Թերևս դարձվածքը պարունակել է հետեյալ իմաստը: Ուրարտ նվաճողը կոլով վերցրած երկրում թողնում է արձանագրություն, կառուցում է բերդեր, բերդ-քաղաքներ, կատարում է այլ կարևոր ձեռնարկություններ: Այդ բոլորը՝ որպես Բիայնա երկրների փառքի՝ հուշարձան ուղղված զեպի թշնամի երկրների սարսափը՝ կամ զուցե՝ թշնամու երկրներին սարսափեցնելու համար:⁶

Արձանագրության 4—6 տողերը թարգմանում ենք՝ «կոչեցի || զրեցի (բերդը) քաղաք Բրբունի անվամբ || անուն (որպես) Բիայնա երկրների փառք, թշնամու երկրներին ի սարսափ»:

Իրբունի քաղաքանունը հիշատակված է նույն Արգիշտի 1-ինի Վանի սրբ. Սահակ եկեղեցում գտնված կոթողի էջերից մեկում՝ հետևյալ կոնտեքստում⁷. 'Ar-gi-iš ti-se 'Me-nu-a-hi-ni-se a-li-e URU Ir-bu-u-ni-ni š[i-i]-d[i]-i-š-tu-u-bi-e KUR Bi-i-a-i-na-a-u-e us-ma-a-se-e⁸, ուր Արգիշտին հա-

¹ C. F. Lehmann, J. Friedrich, Գ. Մելիքիշվիլի և ուրիշներ:

² Գր. Ղափանցյան—Общие элементы между урарт. и хетт. языками, Ереван, 1936, էջ 55, ծնթ. 1. Նաև՝ Ուր. պամ., էջ 24, 45:

³ Իր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940 էջ 91, ծանոթություն 1-ին, էջ 94:

⁴ Գ. Թեղոյանի թղթ, Մարտի 1949, էջ 220 և ուրիշ:

⁵ Նույն տեղում:

⁶ -di անշուշտ ունեցել է նաև նպատակի տրականի իմաստ:

⁷ C. F. Lehmann, Bericht 1900. XXIX, էջ 623, № 100, A₂:

⁸ Օղտվում ենք C. F. Lehmann-ի հոդվածից՝ Die neugefundene Steleninschrift Rusas, II von Chaldia (ZDMG, B. 56, 1902, էջ 106): Դժբախտաբար մեր ձեռքի տակ չկա արձանագրության լուսանկարը, որպիսիք կարողանանք ստուգել ընթերցման իսկությունը: Չկա նաև ամբողջական տեքստը, նույն տեքստում հիշատակվում է արջավանք զեպի Etiuni, Hatti և Supani երկրները:

դորդում է, թե կառուցել է Իրբունի քաղաքը ի փառս Բիայնա երկրների: Տվյալ դեպքում վերջին -ու-ն ուղիղ խնդրի հոլովանիշն է՝ «կառուցեցի զքաղաքն Բրբունի», իսկ Արինրեբդի մեր արձանագրության մեջ -ու-ն possessiv-ի մասնիկն է, հայերեն «-յան», «-ական» ածանցին համարժեք՝ «կոչեցի Իրբունյան (քաղաք) անվամբ»: Քանի որ Արգիշտին բերդը կոչում է Իրբունի անունով, կարելի է ենթադրել, որ այդ բառը ուրարտական է և irbun(i) բառահիմքը որևէ իմաստ ունեցել է ուրարտերենում, թեև նյութերի սակավության պատճառով առայժմ ղժվար է այն պարզել:¹

Հաջորդ 7—9 տողերը պարունակում են շինարարական տեքստերում կիրառվող հետևյալ արտահայտությունը՝ 'Argištiše ali kiurani kuuldi-ni manu zaduuli arnisišili DAN.NU istini:

Kiura-ni բառարմատը, որ երբեմն հանդիպում է անեծքի ֆորմուլայում -di ուղևորական հոլովաձևով՝ շինարարական տեքստերում դերագանցապես կիրառվում է -ni ablativus-ի վերջավորությամբ (հայերեն՝ -ով կամ -ից) և նշանակում է հող || գետին՝² անկասկած խոսքը վերաբերում է բերդ-քաղաքի պարսպապատմանն ու այնտեղի կարևոր կառուցումներին՝ հում աղյուսից, ինչպես այդ տեսնում ենք ուրարտական սովորությունների պեղումներից:³

Վերոհիշյալ կապակցության մեջ խիստ տարակուսելի է manu բառը, որ կիրառվում է շատ հաճախ, տարբեր ձևերով, manu-ni անցյալի, եղակի 3-րդ դեմքով, manu-li(e) ներկա կամ ապառնի եղակի 3-րդ դեմքով⁴, Մհերյան դուռն արձանագրության մեջ 2/34-րդ տողում կիրառված է manu-se զոյականակերտ վերջածանցով⁵, ardi-se(=նվեր) և asuu-se(=?)⁶ զոյականների հետ, որոնք նվիրարբերվելու են ուրարտական եռաստվածությանը. manu-ri, manu հավանաբար դերբայական ձևեր են (անելով, արված). անշուշտ նույն արմատն է անեծքի ֆորմուլայում հանդիպող maani բառը:⁷

Տվյալ պարբերության սկիզբը՝ 'Argištiše ali=«Արգիշտին ասում

¹ Արգյոք որևէ առնչություն չունի՝ irbi-tu բայարմատի հետ, որ կիրառվում է mani LUGAL-e nunabi mei ali LUGA. Šip-še irbitu կապակցության մեջ և հավանաբար նշանակում է՝ լեռն, քամել, քալամել. թերևս Արգիշտին որպես ռազմական հաղթանակի հուշարձան կամ, ինչպես տեքստն է հաղորդում, որպես Բիայնացոց փառքի արտահայտություն բերդը կոչել է՝ «Գրավում», «նվաճում»:

² Զվարթնոցի արձանագրություն, 47-րդ տող, Կելիշինի արձանագրություն, 41-րդ տող:

³ Զվարթնոցի արձանագրություն, 35-րդ տողում KI հող || գետին զադափարագիրը:

⁴ Гр. Канакян, Новая клинопись, «Коммунист», 1950, № 235.

⁵ Հստ J. Friedrich-ի անցյալի իոգնակի 3-րդ դեմք, ինչպես մի անանցողական բայ (manu- vorhanden sein)-Einf. ins urart ..., 1933 թ. էջ 8, § 39:

⁶ Թերևս նշանակում է «արարողություն» (սնել- բայիմաստից) կրոնական առումով

⁷ Որ maani (նաև manini) բայ է և իմաստով գրեթե նույնն է manu(=անել) բայի հետ, պարզ երևում է Մակուի արձանագրության անեծքի տեքստի հետևյալ տողերից՝ turinini DĪhaldiše DIM-še DUTU-niše DINGIRp-še mekuui tini manu-ni DUTU-ni kai (10—12 տ.), որին հաջորդում է թաղավորական տխրոսաշարը: Այսինքն տվյալ դեպքում maani-ն փոխարինված է manu-ni ակնհայտ բայաձևով: Ի դեպ՝ Բ. Բ. Պիտրովսկին հետևելով J. Friedrich-ին mani համարում է անձնական եղակի 3-րդ դեմքի գերանվան հայցական հոլովաձևը. Ист. и культ. Урарту, 1944 թ. էջ 292, ուր սակայն maani-ի փոխարեն գրված է՝ meini:

է՞, թեև գրում է, որ ստորոգյալը լինի եղակի 1-ին դեմքով՝ *zadu-bi* = «կատարեցի», ինչպես սովորաբար հանդիպում է ուրարական տեքստերում, սակայն տվյալ դեպքում բայը համաձայնեցված է նաև օրեկտի հետ (*arni-sini-li* հոգնակի հայցականի վերջավորությամբ) և այդ պատճառով առաջին դեմքի վերջավորությունը սղվել է՝ *zadu-b(i)-li > zadu-li*: Ներդրածական սեռի բայ է. Մորթմանից սկսած թարգմանվել է անել || կատարել բառի մաստով, որ արտահայտում է թե ավարտել || վախճանի ճասցնել և թե շինել || կառուցել հասկացությունը¹. կիրառվում է հավասարապես և շինարարական և թե ողորդական բնույթի տեքստերում՝ հատկապես *arni(u)-šinili* — ձեռնարկություններ² բառի ղուգակցությամբ:

Այսպիսով կատարելի՝ «Արդիշտին ասում է՝ հողից աղյուսներ (?) պատրաստելով կատարեցի (զայնոսիկ) ձեռնարկություններ հզոր³ այգտեղ⁴:

Տեքստի ամբողջական թարգմանությունը կլինի՝

1. Խալդյան մեծությամբ,
2. Արդիշտին Մենուէյան
3. այս բերդը՝ հոյակապ կառուցեց
4. կոչեցի քաղաք Իբբունի անվամբ՝
5. (Որպես) Բիայնա երկրների փառք,
6. թշնամու երկրներին ի սարսափ:
7. Արդիշտին ասում է՝ հողից
8. աղյուսներ (?) *kuuldini* պատրաստելով կատարեցի
9. ձեռնարկություններ (կառուցումներ) հզոր՝ այստեղ:
10. Խալդյան մեծությամբ
11. Արդիշտին Մենուէյան
12. թագավոր (է) հզոր, թագավոր՝ Բիայնա երկրների,
13. տերը՝ Տուշպա քաղաքի⁶:

Երկրորդ արձանագրության քարը ջարդված է վերևից և ձախ կողմից. պահպանված է միայն 9 տող, բայց անալոգիկ տեքստերի հիման վրա հեշտությամբ վերականգնում ենք ողջ տեքստը, որը պետք է եղած լինի առնվազն 11 տող: Արձանադրված մասը 2 սմ թեք զծով դուրս է ցցված քարից, Վերջին տողագծից մինչև քարի ստորին եզրը՝ 8 սմ 8 մմ, տողերը

¹ Համեմատել հայերեն կապերի բայի նման կիրառման հետ. «...կապերեցի (այսինքն շինեցի || կառուցեցի — Մ. Իսր.) զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ...» Արարատ, 1891, էջ 129 և այլուր, «...բայց ի միոյ երանելոյ որ կատարեցաւն (այսինքն վախճանվեց || կյանքը վախճանին հասավ — Մ. Իսր.) նահատակութեամբ ի մեծ պատերազմին» — Ծղեւ, Պատմութիւն Վարդանանց, 1913, էջ 100:

² Ըստ Գ. Միլիբիշվիլու՝ (գաղթե), „деяние“, „подвиг“ (Собр. соч. АН Груз. ССР, т. XI, № 10, էջ 685):

³ Հզոր = DAN. NU գաղափարադիրը դերագանցապես հանդիս է դալիս արքայական տիրոջ սաշարում:

⁴ Չնայած բառի (*ištini*) բաղմադան կիրառությանը, այնուամենայնիվ թարգմանվում է երկրնորանքով. A. Gölze-ն ենթադրաբար թարգմանում է այնտեղ (*dort*) իմաստով (ZA. № F 5, 1929, էջ 127, ծնթ. 1), J. Friedrich-ը ընդունում է այդ՝ վերապահորեն (*Einf...*, 1933, էջ 58–59), ակադեմիկոս Գր. Ղափուլցյունը *ištini*-ն համեմատում է հայերեն ասեմն բառի հետ (Ուր. պատմ. էջ 38), իսկ որոշ գիտնականներ ուղղակի չեն թարգմանում (Գոլենիշչև, Ի. Միշչանինով, Գ. Մերեթելի և ուրիշներ):

⁵ Ընդգծված բառերը արտահայտված են դաղափարադրորեն:

⁶ Տիրոջ սաշարը տրված է սովորականից ավելի սեղմ:

գծված են. տողերի լայնությունն է 3 սմ 8 մմ, տեքստը սահմանագծված է ա⁹ կողմից. սահմանագծից մինչև քարի եղրը մոտավորապես 1,5 սմ է, հորիզոնական մեծ սեպը 4,5—5 սմ է, փոքրը՝ 1—2 սմ, ուղղահայաց մեծ սեպը 2—2,5 սմ, փոքրը 1—1,5 սմ (տես նկար № 3, էջ 79)։

Տեքստը մեր վերականգնումներով հետևյալն է՝

- [1. ¹⁰Sar-du-ri-še]
- [2. ¹Ar-gis-ti hi-ni-še]
3. [i-ni] ¹E ¹a-ri]
4. [su-ù-ni 1¹5100(?)¹
5. [ka-pi] ¹i¹s-ti-ni
6. [¹⁰Sar¹-du-ri-ni
7. [¹Ar]-gis-ti-e hi
8. [LUGAL DAN.NU] ¹LU¹GAL al-su i-ni
9. [LUGAL KUR Bi-a]-i-na-a-u-e
10. [LUGAL (KUR) šu-ra-ùj¹-e² a-lu-si
11. [^{URU}Tu-ušj¹-pa-e URU.

Այս տեքստը մեզ հայտնի է մի շարք արձանագրություններից՝ Տեքստի 6—11 տողերը պարունակում են արքայական՝ համեմատաբար բնդարձակ տիտղոսաշարը, իսկ բուն տեքստը, որ կազմում է մի ամբողջական նախադասություն, զետեղված է նախորդ 5 տողում. Մարդուրը Արգիշտյան այս ¹E ¹a-ri (ինչ-որ կառուցում) բարձրացրեց (?) 1¹5100 kapi isti(ni)-ով, ¹E ¹ari արտահայտության մեջ E=տուն գաղափարագիրը անշուշտ պետք է ըմբռնել որպես դետերմինատիվ, քանի որ ari կիրառվում է հաճախ առանց այդ գաղափարագրի և ուրեմն E.'ari գրությունը ճիշտ չէ. Բառիմաստը առայժմ պարզ չէ։

1894 թ. Ա. Իվանովսկու կողմից Արինբերդի բլրի ուսումնասիրությունը հիմք է տալիս Մ. Նիկոլսկուն 'ari-ն թարգմանել բերդ (крепость) կամ ամրոց (замок) իմաստով. այդ առթիվ նա գրում է՝ Վանլի-թափա բլուրը կարող էր լինել ոչ այլ ինչ, քան բերդ՝ նման Արմավիրին, նրա ոչ մեծ կառուցումները, պատերով հանդերձ, կարող էին կազմել միայն բերդի պատկանումներից, այսինքն աշտարակներ կամ զորանոցներ⁴։

Մեզ թվում է, սույն բանական այդ E.=տուն (ապա՝ տանար) գաղափարագիրը հետաքրքիր հասկացություն է պարունակում և շնորհիվ իր տարբեր նշանակությունների ունի և տարբեր արտահայտությունների. նման պատմական արժեք ունեցող տերմինները թարգմանելիս անհրաժեշտ է

¹ Քարի վրա երեսցող փոքրիկ հորիզոնական սեպի հետքը կարող է պատկանել šuuni բայի վերջին ու($\text{—} \text{y} \text{—}$) նշանին, որ ավելի հավանական է. այդ դեպքում կստացվի 5100 թիվը։

² Բնորոշ ոճ է Մարդուր 2-րդի տեքստերի համար. երբեմն հանդիպում է առանց երկի (KUR) դետերմինատիվի. KUR šuraue-ն սովորաբար նախորդում է KUR Biainaue-ին. հնարավոր է, որ այդտեղ եղած լինի, LUGAL. LUGAL^{pl}-u-e=թագավոր թագավորաց, որը սակայն կիրառվում է KUR. KUR^{pl}-ue արտահայտության առկայությամբ. վերջինս մեր տեքստում բացակայում է։

³ Արինբերդ (Վանլի-թափայի 4 տող արձանագրությունը), Պաղնոց, Աչրուդ-Դարդա, Արմավիր։

⁴ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, МАК V, էջ 99, DB. т. 2, вып. 1, էջ 27. Տես նաև՝ Б. Б. Piotrovский, Ист. и культ. Урарту. էջ 74, 96։

մեծ զգուշություն. Այսպիսի դեպքերում անշուշտ լեզվաբանական պրպր-տուհներին պետք է օգնության գան պատմական և, մանավանդ, հնագի-տական, ճարտարապետական տվյալները: Մենք, ելնելով լեզվական մա-տերիալից, գտնում ենք, որ 'ari || ^E 'ari չի կարող բերվ նշանակել: Ինչ-պես հայտնի է բերդ հասկացությունը հաճախ է կիրառվում գաղափարագ-րորեն (È GAL) և նրան միշտ հաջորդում է sidistu—կառուցել բայը, մինչդեռ 'ari-ի հետ, մեզ հայտնի բոլոր դեպքերում, առանց բացառու-թյան կիրառվում է suuni բայը, որ անշուշտ ունի ավելի նեղ իմաստ, թերևս՝ «բարձրացնել», որի պատճառով կիրառվում է միայն 'ari օբեկտի հետ. այս հանգամանքը օգնում է մեզ ավելի կոնկրետացնելու 'ari բառի-մաստը. եթե վերջինս նշանակեր բերդ, ապա նրա հետ երբեք կարող էր կիրառվել šidiištu-ni բայը կամ հակառակը՝ È.GAL-ի (բերդ) հետ՝ suu-ni բայը. ուրեմն 'ari-ն եղել է մի այլ նպատակի ծառայող կարևոր օբեկտ. այն, ըստ երևույթին, կառուցվել է այնտեղ, ուր արդեն նախապես եղել է բերդ, ինչպես այդ տեսնում ենք Արմավիրում, Արինբերդում և այլուր:

Այս ավելի համոզիչ է դառնում Արինբերդի նոր արձանագրություն-ների շնորհիվ. Արբիշտին կառուցել է բերդ, միաժամանակ կառուցել է 'ari¹, ^E 'ari է կառուցել նաև Արգիշտիի հաջորդը՝ Սարգուրը. այդպիսով՝ գրեթե միաժամանակ, միևնույն տեղում երեք բերդ կառուցելու միտքը անիմաստ է, մյուս կողմից՝ եթե ընդունենք պրոֆեսոր Բ. Բ. Պիտտրովսկու kapi istini կամ kapistini բառի հավանական բացատրությունը և այն հասկանանք տարածական չափ, ապա դժվար է համաձայնվել, որ Արին-բերդի, Արմավիրի և այլ վայրերի 'ari-ները ծավալով իրարից շատ տար-բեր լինեն. եթե ուրարտական բերդերը կառուցվել են 10—15 հազար միա-վորի սահմաններում, իսկ Սարգուր 2-րդի Պաղնոցի արձանագրության մեջ նույնիսկ 19 հազար միավորի, ինչպես է, որ Արմավիրում բերդը կա-ռուցվել է ընդամենը 1432 միավորի չափով:

Պարզ է, ^E 'ari || 'ari ունի ուրիշ բովանդակություն, որ դեռ պետք է պարզել. հայտնի չէ նաև kapiištini տարածական չափի(?) բովանդակու-թյունը:

Անշուշտ ուրարտացիք È. GAL-ի(=բերդ) համար ունեցել են իրենց բառը, սակայն որն է այն՝ ^E 'ari || 'ari, È. murie, È. aši huusie, È. uri-ishusi...² Թե՛ մի այլ բառ, որ մեզ դեռ հայտնի չէ: Մի բան պարզ է, որ այդ բոլոր արտահայտությունները միևնույն բերդ իմաստով թարգմանելը սխալ կլինի:³

¹ Տես Արինբերդի (Դանլի-թափ) 4 տող արձանագրությունը, հայտնաբերված 1894 թ., այժմ ցուցադրված է Մոսկվայի Պատմական թանգարանում:

² Б. Б. Пуотровский, История и культура Урарту, 1944, էջ 77, 202. Ելակետն է Բոստանկայի արձանագրությունը (C. F. Lehmann, Armenien einst und jetzt, B. II, Hälft. II, էջ 474):

³ Մեզ դարձացնում է այն հանգամանքը, որ Բ. Բ. Պիտտրովսկին È. uriišhūsi-ն ևս թարգմանում է բերդ իմաստով («Коммунист», 1947, № 143. գրանից առաջ թարգմանել էր պաեեա բառով. տես ВДИ, № 1, 1947 թ. էջ 190), երբ բոլորովին պարզ է. uriišhūsi բառի վեց նշանակությունը (տես մեր հոդվածը՝ Ն. Մառի անվան կարինետի աշխատու-թյունների № 2, 1947 թ., էջ 217—218), իսկ տուն զեցի, ինչ խոսք, որ կնշանակի՝ «զի-նանոց=арсенал» Պրոֆ. Բ. Պիտտրովսկին հետադարձ մասամբ մոտենում է մեր մեկ-նարանմանը («Коммунист», 1947 № 168. Эпиграфика Востока, № 2, 1948 էջ 83),

Առայժմ 'ari և kapiištini բառերը մենք չենք թարգմանում, հույս ունենալով, որ այն կսարգվի միայն լուրջ պեղումներից հետո, ճարտարապետական չափումների շնորհիվ:

Արինբերդի այս երկու արձանագրությունները թե իրենց հայտնաբերման փաստով, և թե իրենց բովանդակությամբ պատմական գիտական խոշոր արժեք ունեն: Պարզվում է, որ Արգիշտի 1-ինի կառուցած Իրբունի¹ եղիլ է բերդ-քաղաք և գտնվել է Երևանի² մերձակայքում: Իրբունիում (այսօրվա Արինբերդում) ոչ միայն Արգիշտին, այլև Սարգուր 2-րդը կառուցել է ^E'ari, կատարվել են այլ հզոր ձեռնարկություններ:

Այսպիսով՝ ավելի համոզիչ է դառնում մեր այն ենթադրությունը, որ սկսած Արգիշտի 1-ինից (8-րդ դարի 1-ին կեսը մ. թ. ա.) արարապայան դաշտավայրը հանդիսացել է ուրարտական տիրակալությամբ 2-րդ հիմնական կենտրոնը, որը իր ռազմական ու տնտեսական կարևոր նշանակությամբ, Վանի համեմատությամբ թերևս առաջնակարգ դեր է կատարել տվյալ ժամանակաշրջանում Ուրարտուի հզորացման համար: Արգիշտի 1-ինի հիմնական շինարարական ու ռազմական լայն գործունեությունը ծավալվում է հատկապես արարատյան դաշտավայրում՝ Արմավիրում, Արինբերդում, անշուշտ նաև Կարմիր-բլուրում և, իհարկե, շատ ուրիշ տեղերում, որ մեզ կամ բոլորովին անհայտ են, կամ հայտնի են փոքրաթիվ փաստով: Շինարարական լայնածավալ այդ աշխատանքը չի սահմանափակվում նաև Սարգուր 2-րդի ժամանակ:³

Արինբերդի (և մանավանդ Արմավիրի) պեղումները շատ բան պետք է պարզեն Ուրարտուի և Հայաստանի հնագույն շրջանի պատմության բնագավառում: Անհամբերությամբ սպասում ենք թե հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան երբ հնարավորություն կունենա ձեռնամուխ լինելու նաև Արմավիրի պեղումներին, որը իր բարդ շերտավորմամբ պետք է լուսաբանի՝ արդեն կաղմակերպված հայ էթնոսի պատմության առաջին էջերը և անհամեմատ ավելի հստակ դրսևորի այն կամուրջը, որ ընկած է Ուրարտուի և Հայաստանի միջև:

Թեև դժվարանում է միանգամից հրաժարվել նախկին բերդ բացատրությունից, իսկ 1950 թ. նորից կրկնում է 1947 թ. թարգմանությունը՝ «...крепость (букв. «дом оружия»)»... (Кармир-блур, I, 1950, стр. 20).

1 Պրոֆ. Գր. Ղափանցյանը իր նախնական հաղորդման մեջ (տես մեզ մոտ էջ 1, 8 ժանոթութ. 1, 3) Irbuni (Erbuni)-ի համեմատությամբ նշում է Արբուն անունը, որ Մ. Քորենացին հիշատակում է հայոց ժննդաբանության մեջ, բայց դրա շուրջը այլ փաստեր, գոնե մեզ, առայժմ հայտնի չեն:

2 Արդյոք հնարավոր չէ՞ Երևան անունը սերել ուրարտական Irbuni (Erbuni)-ից, հայտնի է, որ ուրարտական Ծ հայերենում սովորաբար տալիս է Ծ (վ), ինչպես՝ Biaina > Վան, ebani > ավան, abili > ավել և այլն: Irbun(i) (Erbuni) > Իրվունի > էրվունի, որ հեշտությամբ կարող է դառնալ Երևան, մանավանդ, որ ուրարտական Իրբունի քաղաքը հենց կպած է Երևանին, իսկ հանրահայտ է, որ սովորաբար տեղանունները խիստ պահպանողական են:

3 Տես «Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների» մեր գիտնականների աշխատանքը:

Урартские две новые надписи¹

Осенью 1950 года, в Аринберде, близ Нор-Ареша, были обнаружены две урартские клинообразные надписи. Одна надпись состоит из 13 строк и прекрасно сохранилась, а другая обломана сверху и с левой стороны, так что на камне осталось 9 строк из предполагаемых 11-ти. Оба текста вырезаны на базальтовом камне.

Приведем наш перевод первого текста.

1. Бога Халда величием
2. Аргишти, сын Менуи
3. Эту крепость великолепную построил:
4. назвал (я) || дал² по имени || имя город Ирбун-
5. во славу стран Биаины,
6. на страх вражеским странам
7. Аргишти говорит: из земли
8. приготовив кирпичи (? kuuldini) совершил
9. предприятия (постройки) могучие тут
10. Бога Халда величием
11. Аргишти, сын Менуи
12. царь могучий, царь стран Биаины,
13. правитель города Тушпы.

Данная надпись принадлежит урартскому царю Аргишти 1-му (1 пол. VIII в. до н. э.). Выясняется, что Аргишти I в Аринберде построил не только 'agi, что известно из четырехстрочной надписи, найденной в 1894 г. в том же Аринберде (Ганли-тапа), но и великолепную (грандиозную) крепость и другие могучие сооружения. Крепости он дал название *Ирбун*, которое, повидимому, урартское слово и, возможно, означает „Завоевание“, „Подвиг“ от глагола *irbitu* = *гонять, нести, ограбить* и т. п.

Текст второй надписи гласит:

- [1. Сардур]
- [2. Сын Аргишти]
3. [это 'E 'agi] (какое-то сооружение)
4. [возвышал ?] 15100 (?)³.
5. [kapi] 'i' štini (?).
6. [Сар'дур
7. [сын Ар] гишти,
8. [царь могучий], 'ца'рь великий,

¹ См. „Советакан Айастан“ (на арм. яз.) 1950, № 234, „Коммунист“, Ереван, 1950, № 235.

² Урартские тексты обычно от III лица переходят к I-му лицу при помощи глагола *alie*=*говорит*, что в данном случае отсутствует, потому ожидалось не *назвал я—terubi*, а *назвал он—teruni*.

³ След горизонтального маленького клина, возможно, принадлежит последнему знаку *pi* () в глаголе *šuu-pi*, что более вероятно. В таком случае число получится 5100.

9. [царь стран Биа] йны

10. [царь вселенной]¹, правитель.

11. [Туш]¹ пы города.

Текст упоминает о Сардуре II-м—сыне Аргишти I-го (II пол. VIII в. до н. э.), который также в Аринберде построил 'ari. Это еще более обосновывает наше предположение² о том, что неправильно 'ari || E 'ari переводить значением „крепость“, как это делалось до сих пор, так как почти одновременно, на той же территории невозможно было бы построить три крепости, притом 'ari, как известно, во всех случаях без исключения, требует глагола suu-ni (=возвести?), но никак не sidiistu-ni (=строить), и, наоборот, E, GAL(--- крепость) всегда употребляется с глаголом šidiistuni или zaduni (=совершил). Понятно, что šuuni более узкое понятие, связанное исключительно с объектом 'ari. Кроме того, эти 'ari строились вообще в границах более 10-ти тысяч единиц (? kapiistini), а в Армавирской надписи (в нашей надписи, возможно, 5100 единиц) 'ari построен в пределах 1432 единиц. Вряд ли урартские крепости могли бы так резко отличаться друг от друга по своим размерам. Ясно, что 'ari возвышались для особого назначения³.

Эти две надписи по факту обнаружения и по самому содержанию представляют большую историческую, научную ценность. Выясняется, что построенный Аргишти I-м *Ирбуни* был *городом-крепостью* и находился вблизи нынешнего *Еревана*. В Ирбуни-Аринберде (как в Армавире, несомненно и в Кармир-блуре, и, конечно, в других пока еще мало известных местах) как Аргишти, так и Сардур развернули свою широкую строительную деятельность.

Таким образом, становится более убедительным предположение, что, начиная со времен *Аргишти I-го*, *вторым основным центром Урарту явилась Араратская долина*, которая, видимо, своим важным военно-экономическим значением сыграла первостепенную роль (по сравнению с Ваном той эпохи) для возрастающего могущества Урарту.

Мы с нетерпением ждем раскопок не только Аринберда, но и, в особенности, Армавира, сложное археологическое наложение которого должно выяснить первые страницы истории уже оформившегося армянского этноса и сравнительно четко выявить ту связь, которая имеется между Урарту и Арменией.

¹ Или *царь царей* (LUGAL LUGALrī - ue)

² См. „Исторический Армавир по урартским надписям“ (на арм. яз., диссертационная работа, 1948 г.).

³ Кстати, проф. Б. Б. *Пиотровский* значением *крепости* (а первоначально значением *кладовой* ВДИ, № 1, 1917, стр. 190 переводит и выражение *£. uriišhusi*) („Коммунист“, Ереван, 1947, № 143, Кармир-блур, Ереван, 1950, I, стр. 20). между тем, совершенно ясно, что *uriišhusi* значит *оружие*, а *дом оружия*, конечно *арсенал*.